

Ընդհանուր առմամբ, ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ ոռոգմամբ հագեցած տնտեսությունները առավել արդյունավետ և առավել շահութաբեր են քան չոռոգվող տնտեսությունները: Սա բացատրվում է ոռոգման համակարգի առկայության պայմաններում զգալիորեն բարձր բերքատվության մակարդակով:

Ընդհանուր ոռոգելի տարածքի մոտավորապես 15% -ը, որի մեծ մասը գտնվում է Արարատյան հարթավայրում, զգում է դրենաժային համակարգերի անհրաժեշտությունը, որպեսզի կարողանա կրճատել ջրակալման և բարձր ստորգետնյա ջրերի մակարդակի արդյունքում գոյացած ազդեցությունները: Արարատյան հարթավայրում ընդհանուր հողերի մոտավորապես 27% գտնվում է ջրային սանդղակի 2 մ. սահմաններում:

Բարձր ստորգետնյա ջրերի մակարդակների ներքո գտնվող տարածքի մի մասում տեղադրված են ստորգետնյա կավային դրենաժներ, որոնց նպատակն է իջեցնել ստորգետնյա ջրերի մակարդակը, որոնք ի վերջո թույլ են տալիս զբաղվել բուսաբուծությամբ, հատկապես այն տարածքներում, որտեղ հողերը աղակալված և ալկալիացված են:

Տարիներ շարունակ ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով դրենաժային համակարգը նոր դրենաժներով փոխարինելու կամ առկա դրենաժները ճիշտ կերպով պահպանելու և մաքրելու հարցում ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել և արդյունքում Արարատյան հարթավայրի դրենաժային պայմանները արագորեն վատթարացել են, հողերի ջրակալումը և ջրային սանդղակի բարձր մակարդակը, որը հանգեցրել է հողերի երկրորդային աղակալմանը և ալկալիացմանը: Այս ամենը բացասաբար է անդրադարձել գյուղատնտեսության արտադրության և հանրության առողջական վիճակի վրա: Վերջին մի քանի տարիներին նկատվել են մալարիայի դեպքեր:

Դրենաժային ջրերի որակով պայմանավորված՝ այս ջուրը հաճախ ետ է վերադարձվում ոռոգման մատակարարման համակարգ և կրկին օգտագործվում ոռոգման սահմանափակ նպատակներով: Դրենաժային վերօգտագործման աշխատանքները սահմանափակված են հողի որակով, ոռոգման ժամանակահատվածով և մշակաբույսի տեսակով:

Որոշ դեպքերում դրենաժային ջրերի որակը չի համապատասխանում ոռոգման նպատակներին, եթե, իհարկե, հանքային բաղադրությունը իջեցնելու համար այն չի խառնվում խմելու ջրին: Այն դեպքում երբ դրենաժային ջրերի հանքային բաղադրությունը գերազանցում է 1.0 գ/լ և կոնցենտրացիան թուլացնելու համար ջրի այլընտրանքային աղբյուրներ չկան, այս դեպքում կոնցենտրացիան թուլացնելու համար ջրի այլընտրանքային աղբյուրներ չկան, այս դեպքում քիմիկատներ են ավելացվում դրենաժային ջրի մակարդակը իջեցնելու համար, և կատարվում է հողերի լվացում երկրորդային աղակալման և ալկալիացման երևույթները կանխելու համար:

Չնայած այն հանգամանքին, որ Արարատյան հարթավայրում նկատվում են տարբեր քանակի և տարբեր որակի ջրի առկայության և գործածության տարածական և ժամանակային տատանումներ, օրինակ՝ ոռոգման ջրի մատակարարումը, դրենաժային ջրերը և ստորգետնյա ջրերը, այնուամենայնիվ դեռևս չեն կիրառվում ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարման, մասնավորապես մակերեսային, ստորգետնյա և դրենաժային ջրերի համակցված օգտագործման եղանակներ:

Դրենաժային համակարգերի գործարկման հանգամանքը էական է որոշ մեխորացված հողերի՝ աղակալման երևույթից խուսափելու համար: Հողերի աղակալման աստիճանը նաև կարևոր գործոն է համարվում բուսաբուծության հարցում: Վերջին 15 տարիների ընթացքում, աղակալման մակարդակների և բուսաբուծության ոլորտում Արարատյան հարթավայրում տեղի են ունեցել զգալի փոփոխություններ, մասնավորապես Հայանիստի և Դարբնիկի համայնքներում: Հիմնական ոռոգելի տարածքներում խառը ցանքատարածությունների առկայությունը արագորեն փոփոխվում է, հետևաբար ազդելով նաև ջրի նկատմամբ ընդհանուր պահանջարկի և յուրաքանչյուր խորանարդ մետր ջրի դիմաց եկամտի մակարդակի վրա:

ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԲՆԱԿԱՆ ԳԱՋԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ

Վերջին տարիների ընթացքում բնական գազի համաշխարհային շուկաներում արժանագրվել են որակական փոփոխություններ՝ պայմանավորված ինչպես վառելիքաէներգետիկ ռեսուրսների նկատմամբ տարեցտարի աճող պահանջարկով ու նոր շուկաների ձևավորմամբ, այնպես էլ գլոբալացման և ինտեգրացման համաշխարհային գործընթացներով, որոնք էապես պայմանավորում են բնական գազի ազգային և տարածաշրջանային շուկաների գործողության կանոնները և հեռանկարները: Վերջին հաշվով, այդ վերափոխումներն առևտրային, ֆինանսական տարատեսակ հարաբերությունների, ներդրումային հոսքերի նոր ուղղությունների և ձևերի առաջացման պատճառ են հանդիսանում, որոնք անխուսափելի են ժամանակակից պայմաններում բնական գազի շուկաների զարգացման և արդյունավետ գործողության համար:

Մարդկության պատմության մեջ անցյալ հարյուրամյակը նշանավորվեց էներգառեսուրսների լայն սպառման, դրանց նկատմամբ պահանջարկի մեծացման, հետևաբար արդյունահանման, ներկրման արտահանման ծավալների ավելացման, այդ շուկաներում կատարված վերափոխումների, տեխնոլոգիական զարգացումների և նոր մոտեցումների ձևավորման դարաշրջան: Դա պայմանավորված է համաշխարհային տնտեսության աճի տեմպերով և պետությունների կողմից էներգակիրների նկատմամբ ձևավորված մեծ հետաքրքրությամբ,

բացառելով՝ վերջիններիս բացակայության պայմաններում ցանկացած երկրի ոչ միայն տնտեսության, այնպես էլ բնակչության առօրյա գործունեությունը և կյանքը:

Ցանկացած ապրանքային շուկայի զարգացումը կապված է տվյալ ապրանքի նկատմամբ պահանջարկի ձևավորմամբ և մեծամասամբ, որն էլ այդ ոլորտում ֆինանսական հոսքերի, ներդրումների ներգրավման տեմպերի ծավալների աճի ապահովման հիմնական խթանն է: Բնական գազը, որպես առավել էժան և շահագործման համար նպատակահարմար վառելիք, մեծ պահանջարկ է առաջացրել ամբողջ աշխարհում: Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները, բնական գազի իրացման շուկաների ներկայիս զարգացումը անմիջականորեն կապվում է էներգետիկայի, այդ թվում՝ բնական գազի նկատմամբ պահանջարկի մեծացման հետ:

2004 թվականի տվյալներով, բնական գազի համաշխարհային պահանջարկը կազմում է ընդհանուր էներգիայի պահանջարկի շուրջ 20%-ը, իսկ համաձայն ԱՄՆ-ի էներգետիկ տեղեկատվական գործակալության (EIA) տվյալների՝ 2020 թվականին այն կհասնի շուրջ 25%-ի: Ինչպես կանխատեսվում է միջազգային փորձագետների կողմից, բնական գազի համաշխարհային պահանջարկը ավելանալու միտում ունի՝ միջին հաշվով տարեկան շուրջ 2.3%, մասնավորապես՝ բնակչության ոլորտում՝ 1.1% և էլեկտրաէներգիայի ոլորտում՝ 1.8%: Բնական գազի սպառման նշված աճը, ըստ կանխատեսումների, գուցե ավելի և քարածխի համապատասխանաբար՝ 1.9% և 2.0% տարեկան սպառման աճով: Ըստ որոշ գնահատականների, բնական գազի սպառման ծավալների տարեկան աճը հաջորդ տարիների ընթացքում Արևմտյան Եվրոպայի երկրներում կկազմի միջինում 1.8%՝ 2025 թվականին հասնելով շուրջ 740 մլրդ խմ-ի, իսկ Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում՝ միջինում 2.2%, 2025-ին հասնելով շուրջ 1.3 տրլն խմ-ի: Ներկայում Եվրոպայի վառելիքաէներգետիկ հաշվեկշռում բնական գազի տեսակարար կշիռը կազմում է 22-24%: Եվրոպայի հանդիսանում է բնական գազի խոշորագույն սպառողներից, որը կազմում է համաշխարհային ընդհանուր սպառման շուրջ 50%-ը և սպասվում է, որ նշված ցուցանիշը հետագա 20 տարիների ընթացքում կմեծանա՝ կազմելով մինչև 70%: 2003-ից սկսած ՀՀ-ում բնական գազի իրացման ծավալների տարեկան աճը կազմում է շուրջ 20%: Ըստ կանխատեսումների, 2010-ին մեր հանրապետությունում բնական գազի սպառումը կկազմի շուրջ 2.5 մլրդ խմ, իսկ 2020-ին շուրջ 4.0 մլրդ խմ¹:

Չնայած նավթի առևտրի շուրջ 50%-ը կրում է միջազգային բնույթ, բնական գազի առևտուրը դեռևս սահմանափակվում է պետությունների կամ տարածաշրջանների ներսում, որը պատճառ է հանդիսանում տարբեր երկրներում բնական գազի գների խիստ տարբերակված լինելուն: Այնուհանդերձ, բնական գազի ծավալների միջազգային առևտրում նույնպես նկատվում են աճի միտումներ, մասնավորապես, 1995-2004թթ. ընթացքում միջպետական խողովակաշարերով իրականացված արտահանման ծավալներն աճել են շուրջ 40%-ով՝ 2004-ին կազմելով 502 մլրդ խմ: Այն փաստը, որ բնական գազի արդյունահանման բազմաթիվ տեղամասեր գտնվում են պահանջարկի կենտրոններից բավականին հեռու, պատճառ են հանդիսանում հեղուկացված բնական գազի (LNG – Liquefied Natural Gas) սպառման միջազգային առևտրի աշխուժացման կտրուկ աճի: Այսպես, եթե 1990-ին հեղուկացված բնական գազի համաշխարհային առևտրաշրջանառությունը կազմում էր 71.2 մլրդ խմ, 2002-ին՝ 148 մլրդ խմ, 2003-ին 168.8 մլրդ խմ, ապա 2004-ին՝ այն կազմում էր 178 մլրդ խմ՝ հեղուկացված բնական գազ, որը շուրջ 5.3%-ով ավելի է քան 2003-ի և 20%-ով ավելի է քան 2002-ի ցուցանիշները: Համաձայն կանխատեսումների, 2020 թվականին հեղուկացված բնական գազի սպառումը կգրադեցնի Եվրոպայի բնական գազի ամբողջ շուկայի 15%-ը, իսկ ԱՄՆ-ի՝ շուրջ 30%-ը: Հայաստանի բնական գազի շուկայի զարգացման հիմնահարցերը քննարկելիս, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ չնայած Հայաստանը չունի բնական գազի պաշարներ, այնուհանդերձ մեր հարևան պետություններում է կենտրոնացված բնական գազի համաշխարհային պաշարների զգալի մասը: Այսպես, Ռուսաստանի Դաշնությունը և Իրանի Իսլամական Հանրապետությունը միասին տիրապետում են բնական գազի համաշխարհային պաշարների շուրջ 42%-ին: Աղբյուրներում 2003-ին բնական գազի գնահատված պաշարները կազմել են 0.85 տրլն խմ, իսկ 2004-ին այդ ցուցանիշը կազմել է 1.37 տրլն խմ: Բնական գազի պաշարներով են պայմանավորվում դրա շուկաների զարգացման և ընդլայնման առանձնահատկություններն ու տնտեսական նշանակությունը²:

2004 թվականի դրությամբ Եվրոպայում գազի արտադրության կամ արդյունահանման բնագավառում առաջնային դերը պատկանում էր Միացյալ Թագավորությանը, որն արտադրում է ամբողջ եվրոպական գազի մոտավորապես կեսը 44.9%, այնուհետև Նիդերլանդներն են (32.0%), իսկ այս երկու երկրներից բավականին քիչ նավթ են արտադրում Գերմանիան (7.7%) և Իտալիան (5.5%), իսկ մնացած երկրների մասնաբաժինն իրար հետ վերցրած կազմում են 9.8%: Այս ցուցանիշները եթե փորձենք համեմատել 1990 թվականի ցուցանիշների հետ, ապա պարզ է դառնում, որ այս ժամանակահատվածում իր դիրքերը բնական գազի արտադրության բնագավառում Նիդերլանդները զիջել է Միացյալ Թագավորությանը, քանի որ 1990-ին այն արտադրում էր ամբողջ Եվրոպայի գազի 39.1%-ը, իսկ Միացյալ Թագավորությունը՝ 29.2³:

Ցանկացած երկրի տնտեսության կառուցվածքը և դրանում գործող տնտեսական համակարգերը այդ թվում՝ զազամատակարարման, համապատասխանում են այդ երկրի պետական կառուցվածքին և ազգային շուկայի առանձնահատկություններին: Ինչպես այլ ապրանքային շուկաների, այնպես էլ գազի շուկաների գործառնությունների և գործողության կազմակերպման վրա մեծապես ներազդում են այն պետաիրավական համակարգերը և ինստիտուցիոնալ միջավայրը (անգլո-ամերիկյան, գերմանական, ճապոնական և այլն),

¹ Methods and nomenclatures, Gas prices, Price systems 2004, European Commission, 2005 edition, pp. 5-128, .

Panorama of the European Union, Gas and electricity market statistics, European Commission, 2005 edition, pp. 12-24,

Panorama of the European Union, Gas and electricity market statistics, European Commission, 2006 edition, pp. 15-26:

² Տես նույն տեղում:

³ Տես նույն տեղում:

որոնց պայմաններում ձևավորվում և գործում են շուկաները: Ակնհայտ է մի բան, որ գոյություն չունի գազի շուկաների ինստիտուցիոնալ կառուցվածքի և գազամատակարարման մեկ միասնական օրինակելի ձև, որը կիրառելի կլինի աշխարհի բոլոր երկրների համար:

Գազի շուկայի մասնակիցները պայմանականորեն բաժանում են.

- գազ արդյունահանող ընկերություններ (Gazprom, british Petroleum, Royal Dutch, Shell, ExxonMobil, OMV, Statoil և այլն),
- գազ ներկրող կամ փոխադրող ընկերություններ (Snam, Gaz de France, Ruhrgas, Wings, Distrigas և այլն), որոնց կազմի մեջ են մտնում մալ գազի պահեստակայանները,
- գազ մատակարարող կամ իրացնող (գազաբաշխիչ) ընկերություններ (Gasunie, Snam, Centrica, Ruhrgas, Gaz de France, Gas Natural, Distrigas և այլն),
- խոշոր սպառողների - էներգետիկ ընկերություններ (RWE, E.ON, ENEL, EDF, Suez, Union Feonsa և այլն) և խոշոր արդյունաբերական ընկերություններ,
- մասնագիտացված էներգատնտեսային (թերյալագային) ընկերություններ (Duke Energy, Williams, AEP (Enron), El Paso Energy, TXU Europe և այլն),
- «նոր» կամ փոքր թերյալագային ընկերություններ:

Աշխարհում առկա են գազի շուկաների ինստիտուցիոնալ կառուցվածքի երեք հիմնական տեսակներ¹.

1. ուղղահայաց ինտեգրված մենաշնորհ,
2. մրցակցային մեծածախ շուկա,
3. մրցակցային մանրածախ շուկա:

Այս տեսակներից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ կառուցվածքը, որով պայմանավորված է գազամատակարարման համակարգի և ներդրումների ներգրավման արդյունավետությունը:

Ուղղահայաց ինտեգրված մենաշնորհը՝ գազի շուկայի այնպիսի կառուցվածք է, որի պարագայում գազի ներկրումը (կամ արդյունահանումը), փոխադրումը և իրացումը իրականացվում է մեկ ընկերության կողմից: Որոշ դեպքերում, նշված երեք հատվածի հետ առկա է մալ չորրորդը՝ մանրածախ գնորդներին մենաշնորհային վաճառող: Այս կառուցվածքի պարագայում գազի շուկան բնորոշվում է մրցակցության բացակայությամբ և կոնկրետ հատվածում՝ մեկ մենաշնորհային ձեռնարկության առկայությամբ:

Նշված կառուցվածքի պայմաններում, գործող ընկերության (կամ ընկերությունների) մենաշնորհային դիրքի չարաշահումից խուսափելու համար, որպես կանոն, պետությունն իրականացնում է ակտիվ միջամտություն (չափ դեպքերում հանդիսանում է բաժնետեր)՝ մասնավորապես սակագնային ոլորտում, իսկ ֆինանսական վիճակի և ներդրումների (մասնավորապես՝ արտաքին) մակարդակը բնորոշվում է ցածր:

Նշենք, որ այժմ Հայաստանում առկա է գազի շուկայի ուղղահայաց ինտեգրված մենաշնորհի կառուցվածքը՝ ի դեմս «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի: 1999 թվականից մինչև 2000թ. հոկտեմբերի 1-ը «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի կառուցվածքում որպես ներդրող և բաշխող հանդես էր գալիս «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն, փոխադրման գործառույթն իրականացնում էր «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի «Տրանսգազ» ՍՊԸ-ն, իսկ գազի մանրածախ իրացումն իրականացվում էր «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ի կողմից: «Գազաբաշխիչ» ՍՊԸ-ի լուծարումից հետո վերջինիս գործառույթը նույնպես իրականացնում է «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ն իր տարածքային մասնաճյուղերի միջոցով:

Մրցակցային մանրածախ գազի շուկայում առկա է մեկից ավելի գազ ներկրողներ (արդյունահանողներ), իսկ փոխադրման բաշխման և իրացման հատվածներն ունեն մենաշնորհային դիրք: Ներկրող մի քանի ընկերությունների առկայությունը նպաստում է ավելի ցածր գնով գազ գնելու հնարավորության առաջացմանը, որի դիմաց կատարվող ծախսը վերջնական գազասպառողին իրացվող գազի կառուցվածքում հիմնական, խոշոր բաղադրիչն է: Օրինակ, «Հայֆուսգազարդ» ՓԲԸ-ի գազի վաճառքի միջին գնում՝ առքի գինը կազմում է շուրջ 64.0%:

Մրցակցային մանրածախ գազի շուկայի կառուցվածքը ենթադրում է գազի ներկրման և մանրածախ իրացման ոլորտներում մրցակցության, իսկ գազի փոխադրման և բաշխման հատվածները հանդես են գալիս որպես մենաշնորհներ (որոշ դեպքերում առկա է մրցակցություն մալ բաշխման հատվածում): Գազի շուկայի այս կառուցվածքը պարունակում է լայն հնարավորություններ մեծածախ և մանրածախ գնորդների համար մատակարարների միջև ընտրություն կատարելու և նվազագույնին հասցնելու գազի գնման հետ կապված ծախսերը, իսկ գործողության արդյունավետությունը ենթադրում է պետության միջամտության բացառում կամ հնարավորինս ցածր մակարդակ, դա կիրառելով միայն փոխադրող հատվածների նկատմամբ, որը գտնվում է մենաշնորհային դիրքում:

Այսպես, 20-րդ դարի 90-ական թվականներից եվրոպական երկրների գերակշիռ մասում տեղի է ունեցել ուղղահայաց ինտեգրված մենաշնորհային գազամատակարարման համակարգերի մասնատում: Իր հերթին, այդ մասնատման գործընթացները վերաբերեցին մալ այդ համակարգերի առանձին հատվածներին, մասնավորապես՝ գազ իրացնող մենաշնորհային ընկերություններին, որոնց բաժնետերերը դարձան միջազգային խոշորագույն ընկերություններ: Օրինակ հունգարական MOL գազի և նավթի ընկերությունը 2000թ-ին տարանջատվեց նավթի ընկերության 100% պետական բաժնետնտեսով (MOL) և 6 շրջանային գազաբաշխիչ ընկերությունների DDGas (խոշոր բաժնետերերն են Ruhrgas-ը և RWE-ն), Degas (խոշոր բաժնետեր է Gas de France-ը), Egas (խոշոր բաժնետեր է Gas de France-ը), Fogaz (խոշոր բաժնետերերն են համայնքները և RWE-ն),

¹ MacAvoy P.W., "The Natural Gas market: Sixty Years of Regulation and Deregulation", Yale University Press, New Haven and London, 2001, 140p.

Tigaz (խոշոր բաժնետեր է Italgas-ը), Kogaz (խոշոր բաժնետերերից է E.ON-ը և EVN-ն): Չեխիայի մանրածախ գազի իրացման հատվածը բաղկացած է 8 ընկերություններից, որոնցում հիմնական բաժնետերեր են հանդես գալիս գերմանական RWE-ն, E.ON-ը, Ruhrgas-ը, Wintershall-ը, ֆրանսիական Gas de France-ը և այլն: Սլովակիայի Pozagas գազ իրացնող ընկերության բաժնետոմսերի 30%-ը պատկանում է Gaz de France-ին, իսկ 70%-ը՝ պետությանը, իսկ Slovrusgas ընկերության բաժնետոմսերի 50%-ը՝ Դաշնություն-ին և 50%-ը՝ Slovak Gas-ին: 2002 թվականի մարտին Դաշնություն-3, Ruhrgas-ի և Gas de France-ի կողմից ստեղծված միջազգային կոնորգիումը ձեռք է բերել Սլովակիայի SPP գազ փոխադրող ընկերության բաժնետոմսերի 49%-ը (յուրաքանչյուրը 16.33-ական %), իսկ 51%-ը մնացել է պետության ձեռքում:

Չնայած Արևմտյան Եվրոպայի երկրների գերակշիռ մասն ընդունել է գազի շուկայի լրիվ ազատականացման սկզբունքները, այդ շուկայի մասնակիցների թիվն առայժմ սահմանափակվում է 1-2 ազգային ընկերություններով (Gas de France – Ֆրանսիա, GasUnie – Նիդերլանդներ, Ruhrgas 7 Wingas – Գերմանիա, Snam – Իտալիա, Statoil – Նորվեգիա և այլն), որոնք զբաղեցնում են մենաշնորհային դիրք պետության ներսում: Այդ մենաշնորհային դիրքի առկայության հետևանքով գործնականորեն բացակայում է «գազ-գազ» տիպի մրցակցությունը: Գազի գները հիմնականում ձևավորվում են միայն մրցակից էներգակիրների (էլեկտրաէներգիա, հեղուկ վառելիք, ածուխ և այլն) գների ազդեցության ներքո¹:

Եվրոպական գազի խոշոր ընկերություններն ակտիվ մասնակցություն են ցուցաբերում նաև նախկին ԽՍՀՄ երկրների, մասնավորապես՝ Մերձբալթյան երկրների գազի շուկաներում, կատարելով ֆինանսական միջոցների մեծածավալ ներդրումներ:

Վերջին ժամանակներում նկատվում է գազի և էլեկտրաէներգիայի ոլորտների ընկերությունների փոխ-ներթափանցման գործընթացներ, ի դեպ, ոչ միայն առանձին երկրների ներսում, այլև՝ ամբողջ տարածաշրջանների մասշտաբով: Օրինակ, RWE խոշոր էներգետիկական ընկերությունը 2002 թ-ին ձեռք է բերել չեխական Transgas գազ փոխադրող ընկերության բաժնետոմսերի 97 %-ը և ինչպես նշվեց վերևում, մի շարք գազ իրացնող ընկերությունների բաժնետոմսեր: Մեկ այլ գերմանական խոշոր էներգետիկական ընկերություն E.ON-ը, 2003 թ-ի մարտին ամբողջովին ձեռք է բերել Ruhrgas գազ իրացնող ընկերության բաժնետոմսերը (Ruhrgas-ը բաժնետոմսեր ունի 23 գերմանական և 21 արտասահմանյան գազի ընկերություններում, այդ թվում 6.5% ռուսական Դաշնություն-ում, 5.2% Սլովենիայի Geoplin գազ փոխադրող ընկերությունում և այլն): Բելգիական Tractebele էներգետիկական ընկերությանն է պատկանում բելգիական Distrigas գազ իրացնող ընկերության բաժնետոմսերի 33.25%-ը, 1998թ.-ին Imartan Voima Company (IVO) էներգետիկական և Neste Oil-and-gas Company գազի ընկերությունների միաձուլումից ստեղծվեց ֆինլանդական Fortum հողինգը, որն առաջատար դիրքեր է զբաղեցնում Հյուսիսային Եվրոպայի էներգետիկայի շուկայում: Դաշնություն-ի կողմից ձեռք բերվեց Մոսկովի ընկերության բաժնետոմսերի հսկիչ փաթեթը և PAO ԷՅՏ Ռոսսիա ընկերության բաժնետոմսերի 10%-ը:

Խոշորացման միտումներ է նկատվում նաև նավթային և էներգետիկական համակարգի ընկերություններում: Այսպես, միաձուլվեցին այնպիսի հայտնի ընկերություններ, ինչպիսիք են՝ BP-ն, Arco-ն և Amoco-ն, Shevron-ը և Texaco-ն, Total-ը, Fina-ն և Elf-ը, Exxon-ը և Mobile-ը, Conoco-ն և Philips Petroleum-ը: Նման միտում նկատվում է նաև Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ միաձուլվեցին Դաշնություն-ը և Рոսне-տե-ը, THK-ն և BP-ն, TotalFinaElf-ի կողմից ձեռք է բերվել Hovatek-ի (ռուսական մասնավոր գազի ընկերություն) բաժնետոմսերի հսկիչ փաթեթը և այլն: Իտալական ENI նավթային ընկերությանն է պատկանում Snam գազ ներմուծող և փոխադրող և Italgas գազաբաշխիչ ընկերությունները: Հայտնի ExxonMobil և Shell ընկերություններին է պատկանում հոլանդական Gasunie բաշխիչ ընկերության բաժնետոմսերի 25-ական %-ները և այս ցանկը կարելի է շարունակել:

Գազի շուկայում տեղի ունեցող բազմաձև գործընթացները հանգեցնում են այդ ոլորտում առևտրային և տնտեսական նոր հարաբերությունների առաջացմանը և տնտեսավարող սուբյեկտների համագործակցության ձևերի փոխանակմանը, որի արդյունքում տեղի է ունենում գազի շուկաների ինստիտուցիոնալ նոր կառուցվածքների ձևավորում:

Հետաքրքիր է նաև Մեծ Բրիտանական գազի շուկայում տեղի ունեցած վերափոխումների օրինակը, որին հետևեցին նաև շատ երկրներ իրենց ազգային շուկաներում վերափոխումներ իրականացնելիս: Մեծ Բրիտանիայում գազի շուկան այսօր լրիվ ազատականացված է, որի ձևավորումը տեղի է ունեցել մի քանի փուլով:

Առաջին փուլ. 1986 թվականին տեղի ունեցավ BritishGas-ի մասնավորեցումը և կարգավորող մարմնի (OFGAS) ստեղծումը: Առկա էր սահմանափակ մրցակցություն: Արդյունքում՝ տեղի ունեցավ բաժնետոմսերի գերբաժանորդագրություն մոտ 4 անգամ, և ընկերության բաժնետոմսերի վաճառքից գոյացած զումարի մեծությամբ կազմեց 5.6 մլրդ ֆունտ ստերլինգ (8.6 մլրդ ԱՄՆ դոլար), իսկ բաժնետոմսերի վերջնական տեղաբաշխման արդյունքում բաժնետոմսերի 62 տոկոսը բաժին ընկավ բրիտանական բնակչությանը, 23 տոկոսը՝ բրիտանական իրավաբանական անձանց, 11 տոկոսը՝ արտասահմանյան ներդրողներին, իսկ 4 տոկոսը և «ոսկե» բաժնետոմսը՝ Մեծ Բրիտանիայի կառավարությանը²:

Երկրորդ փուլ. 1988 թվականին իրացվող ընդհանուր գազի քանակի 10 տոկոսը դուրս եկավ BritishGas-ի իրավասության շրջանակներից:

¹ Ա.Մնացականյան, Բնական գազի շուկայի մոդելի ընտրությունը որպես ներդրումների ներգրավման գործոն, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N2-3 (37-38), փետրվար – մարտ 2004, էջ 87:

² Վ.Գասպարյան, Բաժնետիրական ընկերությունների կառավարման մի քանի հարց. «Ռուսկե» բաժնետոմսերի կիրառման նպատակահարմարությունը, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N11(18), սեպտեմբեր 2002, էջ 22:

Երրորդ փուլ. 1990 թվականին արդյունաբերական սպառողներն իրավունք ստացան ընտրել գազի մատակարարին:

Չորրորդ փուլ. 1992-1994 թվականներին սկիզբ դրվեց բնական գազի բորսային մեծաքանակ առևտրի իրականացմանը և սփոթ շուկայի (spot market) զարգացմանը:

Հինգերորդ փուլ. 1995 թվականին ընդունվեց գազի մասին օրենքը, և տեղի ունեցավ British Gas-ի բաժանումը երկու մասի՝ տեղափոխող և պահեստավորող (BG Transco և BG Storage) և իրացնող ընկերությունների (Centrica), արդյունքում՝ ստեղծվեցին պայմաններ ներքին շուկայում մրցակցության համար:

Վեցերորդ փուլ. 1998 թվականին տեղի ունեցավ գազի միջազգային առևտրի աշխուժացում, աճեցին ինչպես գազի ներմուծման, այնպես էլ Interconnector համակարգի միջոցով Եվրոպա արտահանման ծավալները: Գազի շուկան լրիվ ազատականացվեց:

Նշված փոփոխությունները հանգեցրին.

- գազի մրցակցային շուկայի ձևավորմանը,
- պետության ներսում գնի իջեցմանը (շահեց սպառողը),
- մենաշնորհային դիրքի նվազմանը,
- գազամատակարարի ընտրության հնարավորությանը,
- գազի սպառման ծավալների աճին,
- ներդրումների ծավալների ավելացմանը,
- գազի բորսային առևտրի իրականացմանը և սփոթ շուկայի զարգացմանը¹:

Բնական գազի պաշարներով ներկայումս Ռուսաստանի Դաշնությունը գերազանցում է աշխարհի բոլոր երկրներին, որին գազի պաշարներով հաջորդում են Իրանը, Կատարը ԱՄՆ, Վենեսուելան, ՄԱԷ-ը, Սաուդյան Արաբիան, Թուրքմենստանը, Ալժիրը և Նորվեգիան: Բնական գազի արտահանմամբ Ռուսաստանի Դաշնությունը ևս աշխարհում գրավում է առաջին տեղը, այնուհետև հետևում են ԱՄՆ-ն, Կանադան, Մեծ Բրիտանիան, Ալժիրը, Ինդոնեզիան, Նիդերլանդները, Իրանը, Սաուդյան Արաբիան և այլն²:

Այսպիսով՝ գազի արդյունահանման, գազամատակարարման և գազաբաշխման, ինչպես նաև գազի շուկայի հետ կապված հիմնահարցերը բավականին շատ են: Դրանք անընդհատ գտնվում են դինամիկ զարգացման գործընթացում, իսկ Հայաստանի Հանրապետությունն այդ հարաբերությունների համակարգում չնչին դեր ունի, չունենալով բնական գազի պաշարներ այդ հարաբերությունների համակարգում այն ներկայանում է միայն որպես գնորդ: Այնուամենայնիվ, միջազգային փորձի ուսումնասիրությունը հստակեցնում է գազի շուկայում դիտարկվող միտումներն ու փոփոխությունները, որոնց իմացությունը կարող է հիմք հանդիսանալ գազամատակարարման համակարգի զարգացման և միջազգային կազմակերպությունների (էներգետիկական) հետ արդյունավետ համագործակցության եզրեր գտնելու հարցերում:

ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱՍ Մ.Քոբանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՇՈՒԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Էներգետիկայի և գազի համակարգերը շատ պետություններում հանդիսանում են բնական մենաշնորհ: Այդ համակարգերը համարվում են խոշոր հարկատուներ, միաժամանակ դրանց զարգացվածության մակարդակն անմիջական ազդեցություն է թողնում տնտեսության մյուս ճյուղերի գործունեության վրա: Դա է պատճառը, որ այդ շուկաների զարգացման նպատակների և ուղղությունների ձևավորման ու իրականացման հիմնական պայմաններից մեկն է հանդիսանում պետության մասնակցությունն այդ գործընթացին: Պետության մասնակցությունը բացատրվում է նաև անխափան էներգամատակարարման և գազամատակարարման, ինչպես նաև դրանց հուսալիության և անվտանգության համար պատասխանատվությամբ, ուստի՝ պետությունը ստեղծում է պայմաններ և կիրառում ազդեցության լծակներ՝ էներգակիրների շուկայի ձևավորման և արդյունավետ գործունեության համար:

Գազի շուկայի զարգացման համար պետության մասնակցությունը նախատեսում է ստեղծել համապատասխան ֆինանսատնտեսական պայմաններ (սակագնային, հարկային և դրամավարկային քաղաքականության, սոցիալական և հակամենաշնորհային քաղաքականության, բնապահպանության և այլն), անհրաժեշտության դեպքում օգտագործել կարգավորման և հսկողության արդյունավետ գործիքներ: Ստեղծելով զարգացման պայմաններ, ցուցաբերելով աջակցություն, ինչպես նաև ձևավորելով գազի շուկայում գործունեության կանոնները (օրենքների, որոշումների, կանոնակարգերի միջոցով), պետությունը չպետք է ուղղակի միջամտի գազի շուկայի սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեությանը՝ դրանց թողնելով ինքնուրույնաբար որոշել իրենց գործունեության արդյունավետ ուղղությունների իրականացման ձևերը և գնային քաղաքականությունը:

¹ Ա.Մնացականյան, Բնական գազի շուկայի մոդելի ընտրությունը որպես ներդրումների ներգրավման գործոն, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N2-3 (37-38), փետրվար – մարտ 2004, էջ 89:

² Ս.Սարգսյան, Գազի երկրորդ զարկերակը, Ֆինանսներ և էկոնոմիկա, Հայաստան, N2, օգոստոս 2001, էջ 11: